ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Վանաձոր համայնքի ավագանու 2026 թվականի արտահերթ նիստի՝ կայացած 09.03.2026 թ.

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի պաշտոնակատար, «Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցության ավագանու անդամ Արկադի Փելեշյանը:

Մասնակցում էին՝

«Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի ավագանու խմբակցության անդամներ՝

Սեյրան Ղամբարյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության անդամներ՝ Լուսինե Թադևոսյանը, Վահագն Մկրտչյանը, Հերմինե Մանուկյանը, Գևորգ Հարությունյանը, Արմեն Հարությունյանը, Նոնա Հովհաննիսյանը, Տիգրան Հովսեփյանը, Դավիթ Խաչատրյանը, Էլիզա Մարգարյանը:

«Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Արման Բերնեցյանը, Արաքսյա Սարգսյանը, Արեն Խաչատրյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Ապրելու երկիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտավազդ Ալավերդյանը, Արմեն Այվազյանը:

Նիստից բացակայում էին՝

«Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի ավագանու խմբակցության անդամներ՝

Մամիկոն Ասլանյանը, Հայկազ Մովսիսյանը, Խորեն Վարդանյանը, Գոռ Բադյանը, Արթուր Օհանյանը, Կարեն Պառավյանը, Արևհատ Հովհաննիսյանը, Արման Ափինյանը, Վահագն Դավիթավյանը, Արման Սարգսյանը, Վահագն Ավագյանը, Հովհաննես Նիկողոսյանը, Սանդրա Թադևոսյանը,Դիանա Հարությունովան:

«Հայրենիք» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Վահե Դոխոյանը, Սյուզաննա Անդրեասյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Արկադի Փելեշյանը ժամը 11.00-ին նիստը հայտարարեց բացված: Նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

(Վանաձորի ավագանու 2026 թվականի մարտի 9-ի ավագանու արտահերթ նիստի տեսաձայնագրությունն ամբողջությամբ առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նախքան նիստի օրակարգային հարցերի քննարկումը ավագանու անդամ Ս.Ղամբարյանը հանդես եկավ երախտագիտության խոսքով՝ ուղղված նախկին ավագանու անդամ Գայանե Քալանթարյանին, որից հետո մեկ րոպե լռությամբ հարգեցին Գ.Քալանթարյանի հիշատակը:

«Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար Արտավազդ Ալավերդյանը մինչ նիստի օրակարգը հաստատելը, հանդես եկավ առաջարկով, աշխատավարձերի բարձրացման հարցը նիստի օրակարգում ներառելու կապակցությամբ: Հանրային լսման ժամանակ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հանդես է եկել առաջարկությամբ վերը նշված հարցի վերաբերյալ:

Ա. Փելեշյան - Արդյոք ունեք նախագիծ:

Ա. Այվազյան - Քանի որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներն են առաջարկով հանդես եկել, գուցե իրենք ունենան:

Ա. Հարությունյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը գրավոր դիմել է համայնքապետարան վերը նշված հարցի վերաբերյալ և առաջարկում է նախագիծը ներկայացնի աշխատակազմը:

Ա. Ալավերդյան - Ավելի նպատակահարմար կլինի համայնքային ենթակայության կառույցների աշխատակիցների աշխատավարձերը բարձրացնել, քանի որ աշխատում են չնչին գումարներով, բայց կատարում են հսկայական աշխատանք:

Ի պատասխան հնչեցրած առաջարկի՝ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վ. Գրիգորյանը տեղեկացրեց.

- Պետք է ներկայացվեր որոշման նախագիծ, որպեսզի դրվեր քվեարկության, մեր ունեցած բոլոր ՀՈԱԿ-ների համար պետք է լինեին առանձին նախագծեր, հաստիքացուցակները հաստատվեին, եթե այս պահին էլ հաստատվի բյուջեում նախատեսված չեն այդ գումարները, այս նիստում հնարավոր չէ նախատեսել: Պարոն Այվազյանը հղում է անում սուբվենցիաներին լավ իմանալով, որ ֆոնդային բյուջեից հնարավոր չէ հատկացում անել վարչական բյուջեին, այս պահին վարչական բյուջեում այդպիսի գումարներ չկան, կան միայն պահուստաֆոնդում: Իսկ պահուստաֆոնդից հնարավոր է միայն բյուջեն հաստատելուց հետո կատարել հատկացում: Առաջարկում եմ հաջորդ նիստին ներկայացնել հաստիքացուցակները ձեր առաջարկած ձևով, որը կընդունվի և բյուջեում կկատարվի փոփոխությունը, այս պահին տեխնիկապես հնարավոր չէ այդ գործընթացը կազմակերպել: Քանի որ Վանաձոր համայնքում ավագանու նիստեր չեն կայանում, մտավախություն կա, որ այդ փոփոխությունը չի հաստատվի և աշխատակիցները կկանգնեն աշխատավարձ չստանալու հարցի առաջ:
- Ա. Այվազյան - Եթե նշված հարցի համար նախաձեռնվի ավագանու նիստ ես ներկա կգտնվեմ տվյալ նիստին, քանի որ կողմ եմ այդ առաջարկին: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը քանի որ գրավոր դիմել է, ինչի չեք կատարել հաշվարկներ և ներկայացել նախագծով, եթե համաձայն էիք դրա հետ:
  Վ. Գրիգորյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը առաջարկել է կատարել ուսումնասիրություններ և հնարավորության դեպքում հարցը բարձրացնել: Կատարվել են ուսումնասիրությունները, որի պատասխաններին քիչ առաջ իմ խոսքում անդրադարձել եմ:

Այսօր հնարավոր չի չհաստատված բյուջեից, պահուստաֆոնդից հատկացումներ կատարել: Հաստատվելուց հետո բյուջեն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը: Եթե այսօր բյուջեն ընդունվում է, հաջորդ նիստին հնարավոր է պահուստաֆոնդից հատկացումներ կատարել:
Ավագանու անդամ Ա.Բերնեցյանը առաջարկեց ավագանու արտահերթ նիստի օր որոշել և հարցը հանգամանալից քննարկել:

Նիստը վարողը տեղեկացրեց, որ նախնական ներկայացված օրակարգի մեջ անհրաժեշտություն կա ներառել ևս երկու հարց: Դրանք են՝

- ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

- Պետական սեփականություն հանդիսացող, Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը որպես նվիրատվություն ընդունելու և համայնքի հողային հաշվեկշռում հաշվառելու մասին

Առաջին հարցի մասով ավագանու անդամ Ա.Հարությունյանը հարցրեց, թե որքան տեղյակ է հողային հաշվեկշիռը պետք է նախապես համաձայնեցվի կադաստրի կոմիտեի հետ, արդյոք կա այդ համաձայնությունը և ինչու են հարցերը դուրս մնացել օրակարգից:

Աշխատակազմի քարտուղար Հ.Վիրաբյանը պարզաբանեց, որ ճարտարապետական բաժնի խիստ ծանրաբեռնվածության պատճառով հարցը դուրս է մնացել օրակարգից: Սակայն համաձայն ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 656 որոշման՝ յուրաքանչյուր տարի հունիսի 1-ի դրությամբ համայնքի ղեկավարը կազմում է հողային հաշվեկշիռ և ներկայացնում ավագանու հաստատմանը, քանի որ 2025 թվականի մարտի 5-ից մինչ օրս ավագանու արտահերթ նիստ չի գումարվել, ավագանին այս պահին հաստատում է 2025 թվականի հունիսի 1-ի դրությամբ հողային հաշվեկշիռը, իսկ 2026 թվականի համար կհաստատվի 2026թվականի հունիսի 1-ից հետո:

Երկրորդ հարցի մասով Ա.Փելեշյանը տեղեկացրեց, որ հարցը նոր է ներառվում օրակարգի մեջ, քանի որ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմից ուրբաթ օրը երեկոյան ենք ստացել գրությունը, որում խոսքը վերաբերում է 8-րդ մանկապարտեզին: Համայնքին է նվիրաբերվում մանկապարտեզին կից տարածքը, ինչով և կապահովվի բակային հատվածի ընդլայնումը:

Նիստը վարողը առաջարկեց քվեարկել փոփոխված օրակարգը նոր 45-րդ և 46-րդ հարցերով ներառյալ:

Ներկայացվեց օրակարգը.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2026թ. մարտի 9-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ.՝ Ա.Փելեշյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ.՝ Ա.Մովսիսյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ք.Մադոյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

7. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զ.Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 20 հասցեում գտնվող (06-001-0604-0005 կադաստրային ծածկագրով) հողամասը անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու, 26.10.2010 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 75 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

10. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի հիմնանորոգում (Հայքի հրապարակից մինչև Թումանյան հրապարակ)» ծրագրի բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 22 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

11. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք բակերի հիմնանորոգում, խաղահրապարակների կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն

տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 23 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

12. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի թիվ 7 տնակային մանկապարտեզի շենքի կառուցման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 29 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

13. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության համակարգի կառուցման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 27 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

14. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի կանգառասրահների կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

15. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք թաղամասերում կոյուղու կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

16. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք երկրորդային փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

17. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացու փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

18. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

19. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի քաղաքային լճերի տարածքի բարեկարգում,

Տանձուտ գետի հունի մաքրում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

20. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի ներհամայնքային փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

21. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-2 և Տարոն-4 թաղամասերը կապող էստակադայի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

22. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք հրապարակների բարեկարգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

23. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սայաթ Նովայի անվան այգում ատրակցիոնային պարկի կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

24. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի կարիքների համար տեխնիկայի կայանատեղիի կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

25. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գործարանային փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

26. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Ռ.Բոշյան փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

27. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

28. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

29. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

30. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

31. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք երկրորդային փողոցների հիմնանորոգում սալարկմամբ» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

32. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցի հիմնանորոգում (մինչև Բուսաբանական այգի)» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

33. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր մուտքի ճանապարհի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

34. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

35. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

36. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգում և խաղահրապարակների կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

37. Նպատակային նվիրաբերության իրավունքով գույք ընդունելու և «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին

զեկ.՝ Լ.Հովսեփյան

38. «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին

զեկ.՝ Լ.Հովսեփյան

39. Բաբկեն Մխիթարյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

զեկ.՝ Լ.Հովսեփյան

40. «Հարինգ» ՍՊԸ-ին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

զեկ.՝ Լ.Հովսեփյան

41. «Վանաձորի լողի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մ.Հերացու փողոց, 12 լողավազան» հասցեում գտնվող հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

42. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները և դրանցով զբաղեցված հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

43. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող շինությունների և հողամասերի ընդլայնմանը, ինչպես նաև հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարելուն և վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

44. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով, վարձակալության իրավուքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

45. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026թվականիկանի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

46. Պետական սեփականություն հանդիսացող, Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը որպես նվիրատվություն ընդունելու և համայնքի հողային հաշվեկշռում հաշվառելու մասին

զեկ.՝ Ա.Ալավերդյան

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 2 /Ա.Ալավերդյան, Ա.Ավագյան/ ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

ԸՆԹԱՑՔԸ՝

2. ԼՍԵՑԻՆ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վ.Գրիգորյանը:

Վ.Գրիգորյան - Կարճ ներկայացնեմ. 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը պետք է հաստատվեր նախորդ տարի՝ 2025 թվականին, քանի որ ավագանու նիստեր չեն եղել ներկայացվում է հիմա, արդեն մենք աշխատում ենք 2027-2029 թվականների միջնաժամկետ ծրագրի վրա, ինչպես նաև ասեմ, որ սա պետք է հիմնված լիներ Վանաձոր համայնքի զարգացման հնգամյա ծրագրի վրա, որը հայտնի պատճառներով համայնքը չունի: Այդ պատճառով որոշակի աշխատանք է տարվել, որպեսզի հնարավոր լինի այս ծրագիրը ներկայացնել:

Ա.Ալավերդյան - Թափանցիկ կառավարմանը որքան գումար է հատկացվում և արդյոք թափանցիկ կառավարման մեջ լրատվամիջոցների աշխատանքի հետ կապված մենք ունենք նախատեսված այս բյուջեով տող:

Վ.Գրիգորյան - Թափանցիկ ասելով նկատի ունենք, որ ֆինանսատնտեսագիտական բաժնի բոլոր աշխատանքները թափանցիկ են, այսինքն բոլոր թվերը, կատարված աշխատանքները տեղադրված են Վանաձոր համայնքապետարանի պաշտոնական կայք էջում: Այն իրենից ներկայանցնում է եռամսյակային կատարողական, որը նույնպես ներկայացվում է ավագանու անդամներին: Դուք գիտեք, որ տարեկան հաշվետվությունը անցնում է արտաքին աուդիտ, որի

համար գումար է հատկացվում համայնքի բյուջեից: Համայնքի կատարողականի հետ ներկայացվում է նաև արտաքին աուդիտի եզրակացությունը, այսինքն ինչպիսին է եղել մեր աշխատանքը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 2 /Ա.Ալավերդյան, Ա.Ավագյան/ ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

- Զեկուցեցին համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ա.Մովսիսյանը:

Նիստը վարողը հայտնեց, որ սույն որոշումն հաստատվելուց հետո բոլոր մանկապարտեզները այսուհետ կդառնան անվճար: Ավագանու անդամները իրենց գոհունակությունը հայտնեցին այդ փաստի կապակցությամբ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժնի պետ Ք. Մադոյանը:

Ա.Ալավերդյան – Արդյոք արցախցիների համար անվճար են մանկապարտեզները:
Ք.Մադոյան – Այո, անվճար է, սակայն այլ համայնքների բնակիչների համար վճարովի է:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վ.Գրիգորյանը:

Տեղեկացրեց, որ տեղի են ունեցել հանրային լսումներ և կա աուդիտորական եզրակացություն: Լ.Թադևոսյանը նշեց, որ հարային քննարկման ընթացքում կան հարցեր, որոնց պատասխաններ չտրվեցին, սկսած փոսալցման աշխատանքներից, շների ստերջացման ծրագրերից: Կան շատ

ծրագրեր, որոնք չեղարկվել են, կամ տեղափոխվել են հաջորդ տարի, ծրագրերի մի մասը դեռևս կատարման փուլում են և մեր քաղաքական թիմի կարծիքով կա լրացուցիչ ուսումնասիրման կարիք:

Ա.Այվազյան – Նկատի ունեք հիմա ուսումնասիրենք թե քվեարկենք:

Լ.Թադևոսյան – Հիմա քվեարկենք և նիստից հետո բոլոր խմբակցություններով հավաքվենք և քննարկենք:

Տեղի ունեցավ քվեարկություն՝ 6 կողմ, 2 դեմ, 9 ձեռնպահ:

Ա.Այվազյանը դիմեց ՔՊ խմբակցությանը և տեղեկացրեց, որ տվյալ քվեարկությամբ դրվում է համայնքի ղեկավարի անվստահության հարցը:

Լ.Թադևոսյան – Մենք անվստահության հարց չենք դնում, ձեռնպահ ենք քվեարկում, որ այդ հարցը դրվի հաջորդ նիստին:

Հ.Վիրաբյան – Տիկին Թադևոսյան, այս հարցը հնարավոր չէ տեղափոխել այլ նիստ, եթե կան հարցեր կարող եք հիմա հնչեցնել և ստանալ պատասխաններ:

Ա.Հարությունյանն առաջարկեց հայտարարել ընդմիջում, որից հետո եթե կարիք առաջանա հարցը նորից կդնեն քվեարկության:

Ընդմիջումից հետո ՔՊ խմբակցության ղեկավար Ա.Հարությունյանը նիստը վարողին խնդրեց, որ հարցը կրկին դնեն քվեարկության:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 2 /Ա.Ալավերդյան, Ա.Ավազյան/, ձեռնպահ՝ 5 / Լ.Թադևոսյան, Գ.Հարությունյան, Հ.Մանուկյան, Դ.Խաչատրյան, Տ.Հովսեփյան / ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վ.Գրիգորյանը:

Տ.Հովսեփյան – Բյուջեի թվերը բավականին հետաքրքիր են. շուրջ 32 մլն դոլար, կան ավտոբուսներ ձեռք բերելու և վերելակներ տեղադրելու բավականաչափ գումարներ, ինչը գովելի է: Խնդրում եմ ներկայացնել, թե 2021 և 2026 թվականներին ՀՀ կառավարության կողմից ինչքան դոտացիա է տրամադրվել:

Վ.Գրիգորյանը պատասխանեց հարցերին և ներկայացրեց թվային տվյալներ:

Ա.Փելեշյանը հանդես եկավ հայտարարությամբ և Ա.Այվազյանին ասեց, որ 2022-2025 թվականների ընթացքում բարձրացվել է շուրջ 50տոկոս աշխատավարձ, ինչը դոտացիաների շնորհիվ է եղել:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ- «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զ.Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 20 հասցեում գտնվող (06-001-0604-0005 կադաստրային ծածկագրով) հողամասը անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու, 26.10.2010 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 75 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Արտավազդ Ալավերդյան - Որքան գումար է պատրաստվում հատկացնել սպորտի ոլորտին, ինչ է պլանավորվում, ինչ գույքի մասին է խոսքը, ինչ կառույցի և արդյոք թվերի մեջ կա տարբերություն, նախորդ շրջանում որքան եք հատկացրել, հիմա որքան եք նախատեսում:

Վ Գրիգորյան- 2025 թվականին սպորտի բնագավառում կատարված աշխատանքների համար հատկացվել են գումարներ՝ մենապայքարային մարզաձևի Բազումի դպրոցի տանիքը վերանորոգման համար, Գուգարքի մարզադպրոցի շատ քիչ ծավալով հատակների փոխարինման համար: Այս տարվա իրենց բյուջեով եթե, մոտավորապես, 6 մլն դրամ ավելացվում է, հատակները ամբողջությամբ կփոխարինվեն և ջեռուցման համակարգ կունենան:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

Մինչ օրակարգի հաջորդ հարցի ներկայացնելը աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը հանդես եկավ հայտարարությամբ:

Հարգելի ավագանու անդամներ,

Ինչպես գիտեք, դեռևս **2021 թվականին Վանաձորի համայնքապետարանը**, համագործակցելով Գյումրու համայնքապետարանի հետ, համատեղ առաջարկությամբ միացավ **Բաց կառավարման գործընկերությանը (ԲԿԳ)՝ տեղական մակարդակում**:

Անդամակցությունից հետո Վանաձորը ստանձնեց **5 հանձնառություն**, որոնք ուղղված էին համայնքային կառավարման թափանցիկության, մասնակցայնության և հաշվետվողականության բարձրացմանը: Դրանք են՝

- **Համայնքային ռեսուրսների թափանցիկ կառավարում**
- **Ինտերակտիվ բյուջե / մասնակցային բյուջետավորում**
- **Հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիություն**
- **Համայնքի զարգացման ծրագրի ինտերակտիվ էկրաններ**
- **Կանաչ տրանսպորտի զարգացում**

2025 թվականին հաջողությամբ ամփոփվել են նշված բոլոր հանձնառությունները:

2026 թվականին Վանաձորը նախատեսում է շարունակել իր անդամակցությունը ԲԿԳ տեղական նախաձեռնությանը, որի համար արդեն դիմել է կազմակերպության ղեկավարությանը: Նախատեսվում է ստանձնել առնվազն **երկու նոր նախաձեռնություն**, որոնք միտված կլինեն համայնքային կառավարման **մասնակցայնության, թափանցիկության** և **հաշվետվողականության հետագա ամրապնդմանը**:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Բաց կառավարման գործընկերության տեղական նախաձեռնությանը Վանաձորի շարունակական մասնակցությունը կարևոր հնարավորություն է համայնքում **բարձրացնելու կառավարման թափանցիկությունը, խթանելու քաղաքացիների մասնակցությունը** և **ամրապնդելու հաշվետվողականությունը**:

Ուստի առաջարկվում է հավանություն տալ Վանաձոր համայնքի կողմից **Բաց կառավարման գործընկերության տեղական նախաձեռնությանը անդամակցության շարունակմանը** և **նոր հանձնառությունների մշակման գործընթացին**, ինչը կնպաստի համայնքի կայուն և բաց կառավարման զարգացմանը:

Որպես երկրորդ կարևոր նախաձեռնություն՝ ցանկանում եմ ներկայացնել հայ–ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում մեկնարկած Վանաձոր–Ստրասբուրգ գործընկերությունը, որի արդյունքում իրականացվում է «ՄԵԼԻՆԵԵ – Գործի դնում ենք հզորացված առաջնորդներին. Ներառականություն, Ցանցավորում, Ներգրավվածություն և Հավասարություն» ծրագիրը:

Այս նախաձեռնությունը կարևոր հարթակ է կանանց առաջնորդության խթանման, փորձի փոխանակման և նոր համագործակցությունների ձևավորման համար: Մեր համայնքի համար մեծ նշանակություն ունի նման ծրագրերի իրականացումը, որոնք նպաստում են ավելի ներառական և հավասար հասարակության ձևավորմանը:

Ծրագիրը ներառում է երկու ֆորում՝ Վանաձորում և Ստրասբուրգում, ինչպես նաև վեցամսյա մենթորության ծրագիր, որի նպատակն է աջակցել կանանց առաջնորդական կարողությունների զարգացմանը:

8. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ձեռնպահ՝ 6 / Ա.Ալավերդյան, Լ.Թադևոսյան, Գ.Հարությունյան, Հ.Մանուկյան, Դ.Խաչատրյան, Տ.Հովսեփյան / ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

Սուբվենցիոն ծրագրերի քննարկունից առաջ 3 խմբակցություններից հանդես եկանհայտարարությամբ՝ Լ.Թադևոսյան – իրենց նախընտրական ծրագրում եղել են բակերի, փողոցների, վերելակների կառուցում և ուրախ է տեսնել, որ այս ամենը իրագործվում է, Վանաձորը զարգանում է և ՔՊ խմբակցությունը բոլոր ծրագրերին կողմ է քվեարկելու:
Արտավազդ Ալավերդյան – Սուբվենցիոն ծրագրերը շատ լավն են, նույնիսկ ֆանտաստիկ, սակայն ինքը թերահավատորեն է մոտենում դրանց կատարմանը և որոշել է բոլոր ծրագրերին քվեարկել ձեռնպահ:

Ա.Փելեշյան – Շնորհակալություն հայտնեց ավագանու անդամներին նիստին մասնակցելու և ծրագրերին հավանություն տալու համար և առաջարկեց, որ հերթականությամբ ներկայացվեն սուբվենցիոն ծրագրերը:

10. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի հիմնանորոգում (Հայքի հրապարակից մինչև Թումանյան հրապարակ)» ծրագրի բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 22 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք բակերի հիմնանորոգում, խաղահրապարակների կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 23 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի թիվ 7 տնակային մանկապարտեզի շենքի կառուցման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 29 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության համակարգի կառուցման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու և Վանաձոր համայնքի ավագանու 05 մարտի 2025 թվականի թիվ 27 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի կանգառասրահների կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք թաղամասերում կոյուղու կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

16. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք երկրորդային փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

17. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացու փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

18. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

19. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի քաղաքային լճերի տարածքի բարեկարգում, Տանձուտ գետի հունի մաքրում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

20. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի ներհամայնքային փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

21. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-2 և Տարոն-4 թաղամասերը կապող էստակադայի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

22. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք հրապարակների բարեկարգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

23. ԼՍԵՑԻՆ- . Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սայաթ Նովայի անվան այգում ատրակցիոնային պարկի կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

24. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի կարիքների համար տեխնիկայի կայանատեղիի կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

25. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գործարանային փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

26. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Ռ.Բոշյան փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

27. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

28. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

29. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

30. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

31. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք երկրորդային փողոցների հիմնանորոգում սալարկմամբ» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

32. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցի հիմնանորոգում (մինչև Բուսաբանական այգի)» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

33. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր մուտքի ճանապարհի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

34. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

35. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

36. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգում և խաղահրապարակների կառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լ. Դավթյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

37. ԼՍԵՑԻՆ- Նպատակային նվիրաբերության իրավունքով գույք ընդունելու և «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին

զեկ.՝ Լ.Հովսեփյան

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժ/պ Լ.Հովսեփյանը:

Ա.Փելեշյանը պարզաբանեց, որ խոսքը վերաբերում է դեռևս նախորդ տարի ձեռքբերված փոշեկուլ Կամազ մեքենային, որը նիստեր չկայանալու պատճառով հնարավոր չէր գրանցել:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

38. ԼՍԵՑԻՆ- «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժ/պ Լ.Հովսեփյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

39. ԼՍԵՑԻՆ- Բաբկեն Մխիթարյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժ/պ Լ.Հովսեփյանը:

Արտավազդ Ալավերդյան – Վարձակալության համար փոքր գումար է նախատեսված:

Ա.Փելեշյան – Քանի որ Բաբկեն Մխիթարյանին և «Հարինգ» ՍՊԸ-ին տարածքը վարձակալությամբ տրամադրվում է 1 տարով, հաջորդ տարի գումարի չափը կվերանայվի:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

40. ԼՍԵՑԻՆ- «Հարինգ» ՍՊԸ-ին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժ/պ Լ.Հովսեփյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա.Ալավերդյան/ ընդունվեց որոշում:

41. ԼՍԵՑԻՆ- «Վանաձորի լողի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մ.Հերացու փողոց, 12 լողավազան» հասցեում գտնվող հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Ն.Հովհաննիսյան – Այս հարցը կարևոր է այնքանով, որ լողավազանը կգործի ամբողջ տարի:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

Մինչ հաջորդ հարցի ներկայացնելը Ա.Հարությունյանը հանդես եկավ հայտարարությամբ, որ ՔՊ խմբակցությունը չի հասցրել ուսումնասիրել օրակարգի 42-44 հարցերը, որտեղ ընգրկված են քաղաքացիների շուրջ 1200 դիմում: Ուստի իրենց խմբակցությունը նպատակահարմար չի գտնում կողմ քվեարկել վերը նշված հարցերին, մեկնաբանելով, որ անհրաժեշտ է ուսումնասիրել բոլոր դիմումները, քանի որ լինում են դեպքեր, երբ համայնքապետարանը բակերում ցանկանում է տեղադրել խաղահրապարակներ և բախվում է խնդիրների՝ սեփականության իրավունքով տեղադրված են լինում ավտոտնակներ:

Ա.Փելեշյան – Կա ՀՀ Կառավարության որոշում ինքնակամների օրինականացման, որով մենք առաջնորդվում ենք և 1200 դիմումի մասին խոսք չկա: Քանի որ ժամանակը սուղ է եղել /մոտ 3-4/ օր,

ճարտարապետական բաժնի կողմից մշակվել են ոչ թե 1200, այլ 798 դիմում: Եթե որոշումները հաստատվեն և լինեն խնդրահարույց հարցեր, ինքը որպես համայնքի ղեկավար սահմանված կարգով դիմումներին ընթացք չի տա: Նաև տեղեկացրեց, որ ըմբռնումով է մոտենում ՔՊ խմբակցության դիրքորոշմանը: Ինքը ամենօրյա ռեժիմով ծանոթանում է դիմումներին, իսկ ավագանու անդամները՝ ոչ և առաջարկեց եթե գան համաձայնության, պատրաստ է նոր արտահերթ նիստ գումարել և ավագանու անդամները լրացուցիչ ժամկետում ավելի մանրամասն կարող են ծանոթանալ դիմումներին:

Արտավազդ Ալավերդյան – Հայտնեց իր մտահոգությունը, որ քաղաքացիների հարցերը նորից չլուծվեցին և պնդեց, որ իրեն տևական ժամանակ մեղադրում էին, որ նիստերին չի մասնակցում, այսպիսով քաղաքացիների հարցերը չեն լուծվում: Այժմ ներկա եմ և թող լուծվեն:

Ն.Հովհաննիսյան – Մենք պետք է համոզվենք, որ մեր քաղաքացիների բոլոր դիմումները ընդգրկված են, պետք է ուսումնասիրենք դրանք և կայացնենք օբյեկտիվ որոշում, ոչ թե մոտավորապես:

Ա.Այվազյան - Հայտնեց իր մտահոգությունը, որ կա ՀՀ Կառավարության որոշում և ՔՊ խմբակցությունը դեմ քվեարկելով վերոնշյալ հարցերին, քաղաքացիները իրենց հարցերի լուծումը չեն ստանա:

42. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները և դրանցով զբաղեցված հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 7 /Ա.Փելեշյան, Ա. Բերնեցյան, Ա.Խաչատրյան, Հ.Խլոպուզյան, Ս.Ղամբարյան, Ա.Ալավերդյան, Ա.Այվազյան/, դեմ 9 /Լ.Թադևոսյան, Գ.Հարությունյան, Հ.Մանուկյան, Դ.Խաչատրյան, Տ.Հովսեփյան, Ն.Հովհաննիսյան, Վ.Մկրտչյան, Ա.Հարությունյան, Է.Մարգարյան /, ձեռնպահ՝ 1 /Ա.Սարգսյան/, չընդունվեց որոշում:

43. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող շինությունների և հողամասերի ընդլայնմանը, ինչպես նաև հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարելուն և վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 8 /Ա.Փելեշյան, Ա. Բերնեցյան, Ա.Խաչատրյան, Հ.Խլոպուզյան, Ա.Սարգսյան Ս.Ղամբարյան, Ա.Ալավերդյան, Ա.Այվազյան/, դեմ 9 /Լ.Թադևոսյան,

Գ.Հարությունյան, Հ.Մանուկյան, Դ.Խաչատրյան, Տ.Հովսեփյան, Ն.Հովհաննիսյան, Վ.Մկրտչյան, Ա.Հարությունյան, Է.Մարգարյան /, չընդունվեց որոշում:

44. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով, վարձակալության իրավուքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 7 /Ա.Փելեշյան, Ա. Բերնեցյան, Ա.Խաչատրյան, Հ.Խլոպուզյան, Ս.Ղամբարյան, Ա.Ալավերդյան, Ա.Այվազյան/, դեմ 9 /Լ.Թադևոսյան, Գ.Հարությունյան, Հ.Մանուկյան, Դ.Խաչատրյան, Տ.Հովսեփյան, Ն.Հովհաննիսյան, Վ.Մկրտչյան, Ա.Հարությունյան, Է.Մարգարյան /, ձեռնպահ՝ 1 /Ա.Սարգսյան/, չընդունվեց որոշում:

45. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Ա.Հարությունյանը կրկին հարցրեց, թե որքան տեղյակ է հողային հաշվեկշիռը պետք է նախապես համաձայնեցվի կադաստրային կոմիտեի հետ, արդյոք կա այդ համաձայնությունը:

Աշխատակազմի քարտուղար Հ.Վիրաբյանը և Ճ և Ք բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը տեղեկացրեցին, որ 2025 թվականի հողային հաշվեկշիռը ստացել են ՀՀ Լոռու մարզպետարանից, որը նախապես համաձայնեցված է եղել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Քվեարկությամբ, կողմ՝ 8 /Ա.Փելեշյան, Ա. Բերնեցյան, Ա.Խաչատրյան, Հ.Խլոպուզյան, Ա.Սարգսյան Ս.Ղամբարյան, Ա.Ալավերդյան, Ա.Այվազյան/, ձեռպահ՝ 8 /Գ.Հարությունյան, Է.Մարգարյան, Լ.Թադևոսյան, Վ.Մկրտչյան, Ն.Հովհաննիսյան, Տ.Հովսեփյան, Դ.Խաչատրյան, Հ.Մանուկյան /, դեմ՝ 1 /Ա.Հարությունյան/, չընդունվեց որոշում:

46. ԼՍԵՑԻՆ - Պետական սեփականություն հանդիսացող Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գնվող հողամասերը որպես նվիրատվություն ընդունելու և հողային հաշվեկշռում հաշվառելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Ա.Փելեշյանը պարզաբանեց, որ խոսքը վերաբերում է 8-րդ մանկապարտեզին, որի մոտ գտնվող հողամասերը ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից նախաձեռնվել է Վանաձոր համայնքին նվիրաբերելու, որի նպատակով անհրաժեշտ է որ ավագանին իր որոշմամբ գույքի նվիրաբերությունը ընդունի և այն հաշվառի համայնքի հաշվեկշռում: Սրանով կընդլայնվի մանկապարտեզի բակային տարածքը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ**

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ա.ՓԵԼԵՇՅԱՆ	Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Ա. ԲԵՐՆԵՑՅԱՆ	Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ	Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ԽԼՈՊՈՒՉՅԱՆ	Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ	Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա.ԱՅՎԱԶՅԱՆ	Տ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
	Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՅԿ ՎԻՐԱԲՅԱՆԸ